Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ ի Մ. Բունիաթյանի անվան հ. 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 2025-2026 ուսումնական տարում «Դասվարի» (1-ին դասարանում՝ 17 դասաժամ), «Մայրենի» (5-րդ դասարանում՝ 6 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (8-րդ դասարանում՝ 5 դասաժամ), «Հայաստանի պատմություն» (11-րդ դասարանում՝ 9 դասաժամ, 12-րդ դասարանում՝ 2 դասաժամ), «Հասարակագիտություն» (9-րդ դասարանում՝ 1 դասաժամ, 11-րդ դասարանում՝ 2 դասաժամ, 12-րդ դասարանում՝ 2 դասաժամ), «Հանրահաշիվ» (10-րդ դասարանում՝ 8 դասաժամ), «Երկրաչափություն» (10-րդ դասարանում՝ 2 դասաժամ) «ԹԳՀԳ» (5-12-րդ դասարանում՝ ընդհանուր 8 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Մ. Բունիաթյանի անվան հ. 8 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գավառ քաղաք Հ. Աբրահամյան փողոց 4/6:
Տեղեկությունների համար զանգահարել 093788910 հեռախոսահամարով: